ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2024

«Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 1-ին հրավիրված նիստի: Նիստին մասնակցեցին հանձնաժողովի հինգ անդամ:

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3

Հանձնաժողովի նիստի սկիզբը՝ 2024 թվականի ապրիլի 1, ժամը 15:30

1. Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
2. Թամարա Սարգսյան	Նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
3. Ստալ Սարդարյան	Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/
4. Թամարա Գյոզալյան	Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
5. Ռուզան Սաֆարյան	Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի անդամ, բացող/
6.Կարինե Բաբայան	Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի քարտուղար/

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հարց 1. «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված Նախարարության կողմից 01146, 001146, 0001146, 00001146,000001146,0000001146, 00000001146 ծածկագրերով հայտարարված 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ դասարաններիի հանրակրթական առարկաների դասագրքերի գնահատման սանդղակի քննարկում և հաստատում:

Օրակարգի 1-ին հարց.

Քննարկվեց դասագրքերի գնահատման սանդղակի նախագիծը, որը ներկայացվել էր կարծիքի բուհեր /ԵՊՀ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան, Երևանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարան/: Տրված կարծիքները փոխանցվել են ԿԶՆԱԿ, որոնց հիման վրա լրամշակել է գնահատման սանդղակը և տրամադրվել Նախարարությանը: Ծանոթանալով և հավանություն տալով գնահատման սանդղակի բովանդակությանը՝

Հանձնաժողովը 5 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. **Հաստատել դասագրքերի գնահատման սանդղակը և հրապարակել:**

Հանձնաժողովի նախագահ	Արաքսիա Սվաջյան
Հանձնաժողովի անդամներ՝	Թամարա Սարգսյան
	Ստալ Սարդարյան
	Թամարա Գյոզալյան
	Ռուզան Սաֆարյան
Հանձնաժողովների քարտուղար՝	Կարինե Բաբայան